ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2013 թվականի թիվ 72 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 01.06.2013թ թիվ 1/5.1-5/7475-13 գրությունը

ո ր ո շ ո ւ մ ե մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների 2012թ տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ընկերությունների տնօրեններին սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը, ապահովել շահութաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200424 հաշվին:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ.Ներսեսյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013 թ. հունիսի 12
ք. Իջևան